Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023.
«Զառիթափի մանկապարտեզի վերանորոգման» ծրագիր
Երևան՝ 6 դեկտեմբերի, 2024թ.

2024 թ.-ի դեկտեմբերի 6-ին Զառիթափ գյուղում տեղի ունեցավ «Զառիթափի մանկապարտեզի վերանորոգման ծրագրի» ավարտական արարողությունը:

Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն ԱՈԿԻ Յուտական, Վայք համայնքի ղեկավար պարոն Մխիթար Մաթևոսյանը, Զառիթափի մանկապարտեզի տնօրեն տիկին Ռիմա Ասլանյանը, ինչպես նաև ծրագրի այլ շահագրգիռ կողմեր և տեղի բնակիչներ:

Այս ծրագիրն ընդլայնեց Զառիթափ գյուղի և հարակից համայնքների նախադպրոցական կրթության կարողությունները՝ մանկապարտեզի վերանորոգման և կրթական սարքավորումների տրամադրման միջոցով: Ծրագրի արդյունքում մանկապարտեզը կարող է ընդունել 70 նորեկների, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված երեխաների: Նոր վերանորոգված մանկապարտեզը ոչ միայն կսպասարկի երեխաների կարիքները, այլ նաև ազատ ժամանակ կտրամադրի ծնողներին՝ գյուղատնտեսական կամ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար:

Պարոն Մաթևոսյանն իր երախտագիտությունը հայտնեց՝ նշելով. «Բառերը բավարար չեն մեր երախտագիտությունն արտահայտելու Հայաստանում Ճապոնիայի դեսպանությանը և Ճապոնիայի կառավարությանն այս արդյունավետ համագործակցության համար: Զառիթափի մանկապարտեզի վերանորոգումը Հայաստանի և Ճապոնիայի կառավարությունների համագործակցության հիանալի օրինակ է: Լիահույս ենք, որ համագործակցությունը կշարունակվի, և մեր համայնքում էլ ավելի դրական փոփոխություններ կկատարվեն»:

Դեսպան Առկիի ելույթը

Խմբային նկար շահագրգիռ կողմերի հետ



Վերանորոգված մանկապարտեզի ներքին հարդարանքը

Պարոն Մաթևոսյանի ելույթը